

ՊԱՏՏԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱԿԱՆ

ՌՈՒՋԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԽԻԿԱՐԻ ԶՐՈՒՅՑԻ ԱՐԱՄԵԱԿԱՆ ԲՆԱԳՐԻ ՇՈՒՐՋ

«Պարամութին եւ խրապր խիկարայ իմաստունոյ» բնագիրն առ այսօր զբաղեցնում է բանասերներին, քանի որ նրա ծագման, նախնական տարբերակի, հայրենիքի, լեզվի առանձնահատկությունների եւ այլ հարցերի վերաբերյալ դեռեւս կան բազում հակասություններ: Խիկարի գրույցը հայտնի է Էլեֆանտինյան պապիրուսներից, Նին կտակարանի Տովբիթ գրքից, Եզովպոսի կենսագրության երկրորդ մասից, պահպանվել է հին արամեերեն, սյուրիերեն (նոր արամեերեն՝ ասորերեն), հայերեն, հունարեն, արաբերեն, եթովպերեն, թուրքերեն, սլավոններեն եւ այլ խմբագրություններով: Նին կտակարանի իմաստության գրքերի հետ սերտ աղերսներ ունեցող այս գրույցը խոր հետք է թողել արևելյան ժողովուրդների գրականության վրա, որով եւ բացառվում է նրա հանդեպ դրսևորված մեծ հեղափոխությունը: Խիկարի ուսումնասիրությամբ զբաղվել են անվանի բանասերներ Գ. Նոթմանը, Ա. Մյուլլերը, Բ. Մեյսները, Մ. Լիցբարսկին, Ռ. Նարբիսը, Ֆ. Կոնիքերը, Ա. Սմիթ Լեյխը, Ն. Դրոգոնովը եւ ուրիշներ:

Թեպետ Խիկարի խրատները լայն տարածում են ունեցել միջնադարում եւ խոր հետք են թողել հայ մարենագրության մեջ, սակայն հայ բանասիրությունը երկար ժամանակ հեղափոխություն չի ցուցաբերել հայերեն խմբագրության նկատմամբ: Դա թերեւս բացատրվում է այն հանգամանքով, որ Խ.Աբովյանն իր «Վերք Նայաստանի» գրքի առաջաբանում «Պղնձե քաղաքի պարամություն» ժողովածուն որակել է «խիմար» ու դրանով, փաստորեն, մերժողական վերաբերմունք է սրելով Խիկարի գրույցի հանդեպ, որը 1708-ից ի վեր տեղ էր գրել այդ ժողովածուի մեջ:

Նայ բանասիրության մեջ կատարված ուսումնասիրություններին համառոտ անդրադարձել է Ա. Մարտիրոսյանն իր «Պարամութին եւ խրապր խիկարայ իմաստունոյ» աշխատության Բ. հատորում¹, նշելով, որ Խիկար իմաստունի ծագումն առաջին անգամ փորձել է պարզել Գ. Այվազովսկին՝ իր «Նագար ու մի առակաւոր բանքի» մեջ: Ահա թե ինչ է գրել նա. «Խիկար իմաստունը ոչ թէ Ասորեստանեայց Սենեքերիմ թագաւորին արեւնադայիրն է եղեր (ինչպէս որ Պղնձե քաղաքին անհամ ու անժուր պարամութեան հեղինակը հնարեր է), հապա ինչպէս մենք կը կարծենք Արծրունեայց Սենեքերիմ թագա-

1 Ա. Մարտիրոսյան, Պարամութին եւ խրապր խիկարայ իմաստունոյ, հայտ. Բ., Նրեան, 1972, էջ 28-34:

տրին օրերուն, այսինքն՝ ասկից 850 փարիի չափ յառաջ, Նայասարանի եղած գուարճաբան առականսու ու ժողովրդական իմաստասեր էր»²:

1893-ին Խիկարի ինքնության հարցով զբաղվել է Վ. Տեր-Մինասյանը, նույնպես պնդելով, որ Խիկարը որևէ կապ չունի «Պոնձե քաղաքի պարմություն» ժողովածուի հետ, քանի որ կազմվել է Եզովպոսի կենսագրության նմանությամբ՝ փոխելով միայն անունները: Խիկարի ապրած ժամանակի հարցում, սակայն, Տեր-Մինասյանը չի համաձայնել Այվազովսկու հետ, ասելով, որ Ճառնիփիից մի վկայություն իրեն հիմք է տալիս ենթադրելու, որ Խիկարն ապրել է Զաքարիա Նայրասեփի օրոք՝ 860 թվականին³:

Նայ բանասիրության մեջ Խիկարի շուրջ զիտական լուրջ հետաքրքրություն է սկսվել 1898 թվականից՝ Ֆ. Կոնիքերի կազմած հայերեն բնագրի հրապարակումից հետո: Այնուհետև ասպարեզ է եկել Ն. Չրաքյանը, հայ բանասիրություն ներմուծելով երոպացի հետազոտողների կարծիքները Նին կրակարանի իմաստության գրքերի հետ գրույցի առնչությունների մասին. «Ինչպես յայտնի է, Խիկարի «իմաստութիւնը» համաձայն է Սողոմոնի Առակաց գրոց, կամ լաւ եւս կօգտուի երբայական բարոյականէն, որ Առակաց եւ Ժողովողի մէջ կը գտնուի, եւ ընթերցողք արդէն նկատած պիտի ըլլան Խիկարու եւ Նին կրակարանի առածից մէջ եղած նմանութիւնքը»⁴:

«Նաեղէս ամսօրեայ» ամսագրում 1899-ին տպագրվում է Ն. Տաշյանի ընդարձակ հոդվածաշարը, որում նա անվերապահորեն ընդունում է գրույցի հրեական ծագումը. «Աքիկարու նախնականն ապահովապէս երբայեցոց արտաքին մարտնագրութեան արգասիք մըն էր, այն բազմաթիւ նախաքրիստոնէական արտադրութիւններէն հրէից, որոնց շարքը կորսուած, բայց փոքր մաս մ'ալ թէւ յաճախ այլեայլ փոփոխութեամբ՝ հասած է մեզի: Ասոնց հետ Աքիկար ալ նոյն նկարագիրն ունէր»⁵:

1969-ին լույս է տեսնում Ա. Մարտիրոսյանի «Պարմութիւն եւ խրապր Խիկարայ իմաստուն» գրքի Ա. հատորը, որին նախորդել էին մի շարք հոդվածներ՝ տպագրված «Բանբեր Մարենադարանի» տարեգրքում, իսկ երկու տարի անց՝ նույն աշխատության Բ. հատորը: Առաջին հատորում Մարտիրոսյանը ներկայացնում է գրույցի աղբյուրները, որից հետո իր ուսումնասիրած ձեռագրերը խմբավորում է վեց տարբերակներով, իսկ երկրորդ հատորն ամբողջապես նվիրում է բանասիրական հարցերին՝ քննելով գրույցի պարմությունը, հայրենիքը, բնագրերի հարաբերությունը, տարբեր լեզուներով խմբագրությունները՝ մեջբերումներ կատարելով հիմնականում ռուս բանասերների աշխատություններից:

Որոշ ժամանակ անց, Փայլակ Անթափյանը Երուսաղեմի ձեռագրապահը հայրնաբերում է Խիկարի գրույցի մի նոր ընդօրինակություն, որը մինչ այդ եղածներից հին էր ավելի քան մեկ դարով (ամենահինը պահպանում է 1321 թ.): Նորահայր ձեռագիրը նա հրապարակում է 1980 թվականին. «Սոյն ընդօրինակութեան յեղագայ հանգամանակի

2 Գ. Այվազովսկի, Նագար եւ մի առակատը բանը ազգայինք եւ օրարք, Կ. Պոլիս, 1874, էջ ԺԱ:

3 Վահան վարդապետ Տեր-Մինասյան, Անգիր դպրություն եւ առակք, Կ. Պոլիս, 1893, էջ 2Ը-2Թ:

4 «Բազմավէպ», 1898, էջ 492:

5 Ն. Տաշյան, Մարտնագրական մասը ուսումնասիրութիւնք, մասն Բ., Վիեննա, 1901, էջ 99:

քննությունը, մեզ թուում է, ատելի համոզիչ հիմք պիտի պայ ընդունելու, որ այն ոչ միայն ատելի հին ընդօրինակություն է, այլ ատելի վաղ է կազմուած, քան մեր առ այսօր յայտնի միւս խմբագրությունները, եւ ատելի մօտիկ է բուն, սկզբնական բնագրին»⁶, գրքի համառոտ ներածականում գրում է Անթափյանը, միաժամանակ հաստատելով փառածված այն փաստակերը, համաձայն որի հայերեն թարգմանության համար սկզբնաղբյուր է ծառայել ասորականը:

Եւ այսպես, հայ բանասիրության մեջ Խիկարի գրույցի ծավալուն քննությունն ավարտվել է Ա. Մարտիրոսյանի նշյալ աշխատությամբ, իսկ դրանից հետո՝ վերջին քառասուն տարիներին միջազգային բանասիրության մեջ կատարված ուսումնասիրություններին առհասարակ անդրադարձ չի արվել:

Նայ բանասիրության փաստադաշտից դուրս մնացած հարցեր - Ինչպես նշեցինք, Խիկարի գրույցի վերաբերյալ գրվել են մի շարք աշխատություններ, հոդվածներ, սակայն պետք է նկատել, որ որոշ հարցեր երբեւէ չեն արծարծվել հայ բանասիրության մեջ: Խոսքը նախ եւ առաջ գրույցի արամեական պատկերասրահի հայտնաբերման վայրի մասին է, որը բանասիրության մեջ ընդունված է կոչել «Էլեֆանտինի հրեական համայնք»: Պարզելու համար, թե որքանով էր այդ համայնքը հրեական, փորձենք դիմել հրեական բանասիրությանը, նկատելով հրեա ուսումնասիրողների մանրակրկիտ ու զգայուն մոտեցումն այդ հարցին: Թարգմանաբար ներկայացնենք մի հարված Մ.Դ. Կասուպյի «Կեղեմ» եբրայերեն աշխատության առաջին հատորում զետեղված գիտական նյութերից⁷, որոնք ուշագրավ տեղեկություններ են պարունակում պատկերասրահի հայտնաբերման վայրի՝ Եւի մասին, որը հետագայում հայտնի է դարձել Էլեֆանտինի անվամբ:

«Եւր եղել է հնագույն քաղաք Եգիպտոսի հարավում՝ Նեղոսի կղզում, Կապարակր առաջինից քիչ հյուսիս: Նայրնի է նաեւ հունարեն Էլեֆանտին անունով: Կղզու հարավային վերջնամասում մինչ օրս պահպանվել են հնագույն բնակավայրի հետքերը, որտեղ էլ կատարվել են հնագիտական պեղումները: Կղզու դիմաց՝ Նեղոսի արեւելյան ափին, հայտնաբերվել է մեկ այլ բնակավայր՝ արաբերեն Ասուան կամ Սվան անունով: Եւր, ինչպես վկայում են նրա արամերեն եւ հունարեն անվանումները, եղել է փղոսկրի առևտրի կենտրոն: Տարբեր ժամանակներում Եւր եւ Ասուանը եղել են Եգիպտոսի հարավային ամրոցը՝ նրան պաշտպանելով Քուշի բնակիչներից: Բուրգերի կառուցման ժամանակ Եւն ունեցել է ռազմավարական կարևոր նշանակություն, քանի որ ծառայել է որպես սահմանային ամրոց: Ասորական փիրապետության շրջանում, Պասմապախ I-ի օրոք՝ Ք. ծ. ա. 663-609 թթ., Եւի ռազմավարական նշանակությունը վերստին մեծացել է ու պահպանվել մինչև Արեմեյան փիրապետության շրջանը՝ Ք. ծ. ա. Ե. դ., երբ հանձնվել է պարսից իշխանությանն ու

6 Փ. Անթափյան, Պարմություն եւ Խրաքը Խիկարայ Իմաստուն, Երուսաղեմ, 1980, էջ ԺԸ:

7 Մ.Դ. Կասուպո, Կեղեմ, Երուսաղեմ, 1996, էջ 17-52, 53-56, 259-263:

կառավարմանը: Նենց այդ ժամանակ էլ Եւում գոյություն է ունեցել հրեական համայնք, որի մասին տեղեկություններ են հաղորդում հնագիտական պեղումների ընթացքում գտնված վավերագրերը: Դրանց մեծ մասը հայտնաբերվել է 1893 -1908 թվականներին:

Եւի ավերակները 1906-1908 թթ. պեղեցին Բեռլինի թանգարանի հնագետները, որոնք հայտնաբերեցին կարելուր պապիրուսներ ու գրածոներ: Դրանցից հաջորդապես կարելուրվեցին հրեական փաճարի կործանման մասին վկայող վավերագիրը, ինչպես նաև գրական երկու բնագրերի պատճիկները: 1911-ին այդ վավերագրերը հրապարակեց Զախաուն: Այդ ժամանակ Եւի վավերագրերի հայտնաբերումն ամենանշանակալիցն էր բոլոր բացահայտումներից: Դրանք կարելուր նյութ դարձան ոչ միայն հին արամեերենի, այլև Աքեմենյան փիրապետության շրջանում որպես պաշտոնական լեզու գործածված արքունական արամեերենի, ինչպես նաև սուրբգրային արամեերենի քերականական առանձնահատկությունները հասկանալու համար:

Նայտնաբերված վավերագրերը թվագրվում են Ք. ծ. ա. 499-495 թթ.: Մեծ մասը իրավական փաստաթղթեր են՝ հաշվեցուցակներ, ապահարգանքներ, հրամանագրեր, մարդկանց ունեցվածքի մասին տվյալներ: Երկու բնագրերից մեկը պաշտոնական գրություն է Դարեհ I-ի հաղթանակների մասին՝ Ք. ծ. ա. 420 թ., մյուսը՝ Խիկարի խրապների արամեերեն պատճիկներ: Ի դեպ, Խիկարի սույն փարբերակն ամենահինն է մինչ այդ եղած խմբագրություններից: Զարմանալի է, որ Եւում չեն հայտնաբերվել երրայերեն ձեռագրեր, թերևս պատճառն այն է, որ դրանք պահվել են հրեական փաճարում եւ այրվել են նրա ոչնչացման ժամանակ:

Նրեական համայնքը - Եւի վավերագրերում հրեաների բնակավայրը կոչվում է «խիլա եհուդիյա» (երրայերեն՝ «հախիլ հայեհուդի», այսինքն՝ հրեական խիլ - Ռ.Պ.), որն իրենից ներկայացրել է կազմակերպված գինվորախումբ: Այդ անվանումը ցույց է տալիս, որ «խիլը» գինվորական միավորում է եղել, որում ընդգրկվածներն ունեցել են իրենց «դրոշները»: Մակայն դրանց վրա գրված անունները հրեական չեն եղել, այլ՝ պարսկական կամ բաբելական: Նավանական է, որ գրվել է առաջնորդի անունը, որը հրեա չի եղել, այլ՝ պարսիկ կամ բաբելացի: Ինչպես երևում է, դրոշները չեն միավորել Եւի բոլոր հրեաներին, քանի որ առաջնորդների անունների գրության ձևերը միանգամայն փարբեր են: Եւի հրեաները հիշատակվում են նաև «արամացի» (երրայերեն՝ առամի - 𐤀𐤓𐤌 - Ռ.Պ.) անվանումով: Պարզվում է, այդպես է կոչվել գինվորական բավականին մեծ ջոկատ, որում բացի հրեաներից, եղել են նաև արամեախոսներ: Վավերագրերի անվանացանկում կան բազմաթիվ ոչ հրեական ու սակավաթիվ հրեական անուններ, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ գինվորախումբը միափարք չի եղել: Դրոշի վրա գրվել է նաև «𐤌𐤕𐤌» (երրայերեն փառա-

դարձված են արամեական այբուբենի մ, ա, հ տառերը - Ա.Պ.) բառը, որի կապը դրոշի հետ հայտնի չէ: Գուցե դրոշն այդ անունն է կրել ոչ հրեա առաջնորդի պատճառով: Կարելի է ենթադրել, որ «խիլի» օտար ղեկավարությունը գրադվել է արաբաքին գործերով և լուծել է հրեաների արաբաքին հարաբերությունների հետ կապված հարցերը, իսկ ներքին հարցերը փնտրինել են հրեաները:

Նրեական համայնքի գլխավոր վայրը եղել է տաճարը (արամեերեն՝ ագու-ռա), որտեղ ծառայել են քահանաները: Նրանց կողքին եղել են նաև ուրիշ մարդիկ, որոնց կոչել են «լիսն գի Յի», սակայն հասկանալի չէ, թե ի՞նչ պաշտոն է գրադեցրել «լիսն» կոչվածը, որի կնոջը անվանել են «լիսնա», այսինքն՝ նույն բառի իգական ձևով: Վավերագրերից մեկը հուշում է, որ տաճարը կառուցվել է Եգիպտական թագավորների օրոք, և ըստ այդմ ենթադրվում է, որ Քանբուգիի կողմից Եգիպտոսի գրավման ժամանակ՝ Ք. ծ. ա. 525 թվականին, տաճարն արդեն կառուցված է եղել: Բայց քանի որ պեղումների ժամանակ հնագետներն այդ մասին վկայող ոչինչ չեն հայտնաբերել, ուստի դա փնտրել է փվել տարբեր կարծիքների. ըստ ոմանց տաճարը հիմնվել է Ք.ծ.ա. Է.-Զ. դդ. կեսերին, ըստ այլոց՝ ասորական Պասմապախ I-ի ժամանակ Ք. ծ. ա. 663-609 թթ., երբ նրա բանակում ծառայել են նաև հրեաներ: Մեկ այլ կարծիքի համաձայն, տաճարը կառուցվել է Պասմապախ II-ի օրոք՝ Ք. ծ. ա. 593-589 թթ.: Ներագրողներն ուշադրություն են դարձրել այն հանգամանքի վրա, որ Երուսաղեմի առաջին տաճարը կործանվել է հենց այդ շրջանում, և ըստ այդմ ենթադրել են, որ հրեաները Եգիպտոս են գաղթել տաճարի կործանումից հետո: Այդ դեպքում միանգամայն զարմանալի է այն փաստը, որ Երեմիայի ԽԴ.15 և դրան հաջորդող մասերում Եգիպտոսի հրեական տարբեր բնակավայրերի անունների կողքին չի նշվում Եփ անունը: Այսպեղից կարելի է եզրահանգել, որ Եփ հրեական համայնքի մասին ոչ մի տեղեկություն չի եղել, ոչինչ չի պարզվել նաև տարբեր արշավախմբերի կողմից Ի. դարի սկզբին կառարված պեղումների ժամանակ:

Կասկածից վեր է, որ հրեական համայնքը Եգիպտոսում ծաղկել է պարսից փրապետության շրջանում, և հենց այդ ժամանակ էլ ստեղծվել է «խիլը», որտեղ սկզբնապես բնակվել են նաև տեղացիները, որոնք մեկուսացված լինելու պատճառով գինձորական ծառայություն չեն կատարել: Ելում հրեաների ճակատագրի համար վճռորոշ է եղել պարսից փրապետության ավարտը՝ Ք. ծ. ա. Դ. դարը: Մակավաթիվ լինելու պատճառով նրանք ի գործու չեն եղել փրկել իրենց տաճարը կործանումից:

Նրեական բնակավայրի մասին վկայող վերջին փաստաթուղթը գրված է Ք. ծ. ա. 399 թ.: Իրականում այնտեղ որևէ տարեթիվ չի նշվում, այլ այդ մասին ենթադրվում է թագավորների անունների հիշատակմամբ: Վավերագրերի բովանդակությունը պարզ չէ, ուստի ընդունում են, որ հրեական համայնքը

Եգիպտոսից հեռացել է պարսից փիրապետության անկման հետ միաժամանակ:

Վավերագրերի լեզուն - Բոլոր վավերագրերը գրված են հին արամեերենով, որը մոտ է Էգրայի գրքի արամեերենին⁸: Այդ շրջանում այն ընդհանուր հաղորդակցման լեզու էր, դեռևս փեղի չէր ունեցել նրա աշխարհագրական բաժանումը արևելյանի և արևմտյանի: Եւի արամեերենն անվանում են նաև «նախաարամեերեն» կամ «արքունական արամեերեն», որովհետև Աքեմենյան փիրապետության շրջանում պաշտոնական լեզու էր մերձավորարևելյան բոլոր ժողովուրդների համար և հենց այդ պարճառով նրանց մայրենի լեզուներն անուղղակիորեն կրում էին դրա ազդեցությունը:

Եւի արամեերենի բաղաձայնական համակարգը ճանաչելը բավականին բարդ է, նույնիսկ հնարավոր չէ բնորոշել ավելի ուշ շրջանի գրությունների օգնությամբ, որոնք նույնպես գրված են առանց կեդրային նշանների: Այսպես օրինակ, արամեերենում բայի արական սեռի հոգնակի թվի **ին-ր** վերջավորությունը (օր.՝ արամեերեն-բանին, եբրայերեն-օվդիմ՝ աշխատում են) շարք է պահպանվել գրության նույն ձևով, հաճախ գրվում է առանց «յուդ» փառի, ինչը ենթադրում է, որ կարդացվել է ոչ թե **ան**, այլ՝ **ին**:

Փաստորեն, այդ լեզվի բաղաձայնական համակարգը ճանաչելի է դարձել սուրբգրային արամեերենի միջոցով, չնայած որ Եւի արամեերենն առաջին հայացքից բավականին փարբեր է սուրբգրայինից և ավելի մոտ է հնագույն արամեերենին: Այսպես բառարմարում «փավ» (փ) փառը միշտ պահպանվում է՝ **ափառ, ափուռ** և այլն: Կան բառեր, հարկապես դերանունները, որոնք սկսվում են գային (գ) փառով, ինչպես՝ **գնա, գելխ (գախ), գխառն** և այլն: Բառերի մեծ մասը գրված է դալեպ (դ) փառով՝ **Էդին (ադին), դվախ** և այլն: Որոշ բառեր գրված են կոֆ կամ այլին փառերով, ինչպես՝ **ամառ, ցմառ, կամառ, առա, առքա, ալ**: Սա ցույց է տալիս, որ թեպետ հնչյունների արտասանությունը համապատասխանում է սուրբգրային արամեերենին, սակայն մի շարք բառերի գրության ձևերը բնորոշ են հնագույն արամեերենին: Ձևաբանորեն Եւի արամեերենը մոտ է սուրբգրային արամեերենին, ինչը հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչելու վերջինիս առանձնահատկությունները: Այդուհանդերձ, Եւի արամեերենի քերականական ձևերը հաստատվում են, այսպես օրինակ, Խիկարի խրատներում շարադասությունն ազատ է, պարզ թվականներից առաջ գործածվում է **գի** մասնիկը:

Տրեաների դավանած կրոնը - Վավերագրերի բովանդակությունը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել հրեաների դավանած կրոնի մասին: Չի գտնվել և ոչ մի արձանագրություն, որը հիմք կտար խոսելու հրեաների կարարած գործերի մասին: Նույնիսկ հայրնի չէ, արդյո՞ք եղել են հրեաների մասին պարամոլ գրություններ, սակայն պարզվել է, որ նրանք դավանել են իրենց աստծուն, որի անունը պապիրոսներում հանդիպում է Յու, Յե, իսկ մի դեպքում՝ Յեհ ձևերով: Անվան վերջին ձևը չի հանդիպում մյուս վավերագրերում ու միակն է Եւի օստրակոնների (խեցեղենի բեկորներ) մեջ: Չի գործածվում նաև Աստծո անվան «Էլ» ձևն իբրև վկայություն «Էլոհիմ»

⁸ Արամեերենի զարգացման փուլերի մասին փնտ. Ռ. Պողոսյան, Տին կրակարանում արամեերեն եզրի գործածության մասին. «Էջմիածին», 2011, է., էջ 103-104:

(աստված) անվան, ինչը ցույց է տալիս, որ այն գործածական չի եղել Եւում, եւ այնպեղ գոյություն են ունեցել տարբեր աստվածների պաշտամունքներ:

Պարսից կառավարիչներին ուղարկված նամակները սկսվում են «էլա շամայա» - **երկնքի աստված** բառերով՝ ինչպես Էգրայի գրքում, ինչը պարզորոշ ցույց է տալիս, որ նամակագրության այդ ձևը տարածված է եղել Աքեմենյան փիրապետության շրջանում: Փաստորեն, հրեաները հավատացել են իրենց աստծուն, սակայն հրեադավան կենտրոնների հետ նրանց կապը թույլ է եղել, ու հենց այդ պատճառով իրենց տաճարը Եգիպտոսում կառուցել են Աքեմենյան փիրապետությունից առաջ: Տաճարը կոչել են ագուռա (մեջբերվում է արամեերենից եբրայերեն տառադարձված հեպրեյալ նախադասությունը՝ «ագուռա գի Յի Էլիա»: Ռ.Պ), որը հավանորեն առաջացել է շումերա - արադական ekurra անունից: Միայն մեկ օտարականի վրա է հանդիպում «բեյր Յի»՝ **Աստծո տուն** ձևը:

Թե որտեղ՝ դ է գրվել տաճարը՝ հայտնի չէ, բանի որ պեղումների ժամանակ այդ մասին վկայող ոչինչ չի հայտնաբերվել: Տաճարի մասին ակնարկվում է միայն 408թ. Բագոնի անունով կառավարչին հրեաների ուղարկած գրության մեջ, որն էլ հրեաներին թույլ է տվել վերադառնալ ու կառուցել այն: Նույն նամակում նկարագրվում է նաև Ելի տաճարը՝ կառուցված տաճարից, քարն սյուներով, հինգ դարպասով, ամուր առաստաղով, պղնձե դռներով, ոսկյա եւ արծաթյա նախշազարդերով: Տաճարում գործածվել են պաշտամունքային ծեսի պարագաներ, սպիտակ խեժ: Այս ընդհանրական նկարագրությունը, սակայն, բավարար չէ գոհաբերությունների ծեսի մասին մանրամասներ խմանալու համար, ուստի ենթադրվում է, որ տաճարի պահպանության ծախսերը հոգացել են հրեաները:

Նկարագրողները կազմել են 123 հրեաների անվանացանկը, ենթադրելով, որ նրանցից յուրաքանչյուրը տաճարին նվիրաբերել է 2 շեկել (հրեական դրամական միավոր): Նրեական տոներից նշվել է միայն Պեսախը (հրեական Չապիկը), ինչի մասին ակնարկվում է մի վնասված օտարականում: Պարզվում է, որ ոմն Խանանիա 419 թ. գրել է մի նամակ, որի սկզբում խոսվում է թագավորի կողմից Եգիպտոսի կառավարիչ Արշամի մոտ սուրհանդակ ուղարկելու մասին: Նույն տեքստում շարադրված է նաև թագավորի նամակը Արշամին: Օտարականի վնասված լինելու պատճառով ուսումնասիրողները նամակի բովանդակությանը տվել են գույր խմաստային բացատրություն, ըստ որի, թագավորն անհրաժեշտ է համարել պարսից իշխաններին տեղեկացնել հրեական Պեսախի անցկացման մասին: Ուսումնասիրողներից ոմանք հանգել են այն մտքին, որ Պեսախի օրերին հրեա զինվորներն ազատվել են ծառայությունից, ոմանք էլ առաջ են քաշել հրեական Պեսախի ծագմանն առնչվող հարցեր: Կարծիք է հայտնվել, որ Իսրայելի ժողովուրդը երկրի հյուսիսում չի հրաժարվել տոնի օրերին հացամթերք ուրելուց, քանի դեռ չի ստացել Էգրայի հրահանգը: Բացի այդ, Ք. ծ. ա. Ե. դարում Պեսախի անցկացման օրը դեռևս որոշված չի եղել, այն նշվել է Նիսան ամսվա 15-21-ը՝ Էգրայի հրահանգից հետո միայն:

Վավերագրերում ակնարկվում է նաև Շաբաթ օրվա պահքի մասին: Օսպրակոններից մեկում մի մարդ զգուշացնում է ընկերոջը, որ իր ցուլին կապի շաբաթ օրը: Դյուպոն Սոմնոի կարծիքով, այսպեղ գործածված է ոչ թե շաբաթ, այլ արամերեն «շաբա հաբա» բառը, որը Թ-ալմուդում նշանակում է շաբաթ: Յեռովա անունը հանդիպում է միայն մեկ օսպրակոնում, որպեղ նամակագիրը «Յեվ» -ի կողքին ավելացնում է մեկ այլ՝ «Խեն» ասպծո անունը: Խենը կապված է եգիպտական Խանավ ասպծո հետ, որը հայերն է Խառանում գործածված հայրուկ անուններից: Մեկ այլ օսպրակոնում նշվում է, որ Յառխո անունով մի մարդ մաղթում է իր նամակագրին՝ Խագիին, որ բաբելական ասպվածներ Բելը, Նաբոն, Շամաշը եւ Նարգելը նրան ողջ եւ առողջ պահեն: Ինչպես գիտենք, Քեռլինգն արդեն ապացուցել է, որ արամեական Յառխո եւ Խագի անուններով կոչվել են նաև ոչ հրեաները: Չնայած դրան, պետք չէ կասկածել, որ հրեան նույնպես կարող էր կրել Նադադնուի անունը, որ հանդիպում է քաճարի նվիրատուների ցանկում: Ի դեպ, նվիրատվության մասին վավերագրերի փյալներն առաջին հայացքից հակասում են միմյանց: Մի քեղ ասվում է, որ ամբողջ գումարը՝ 31 քարշան եւ 8 շեկլան ընծայվել է «Յեվ» -ին, իսկ մեկ այլ քեղ, որ գումարի մի մասը՝ 7 քարշան, նվիրաբերվել է Աշմվիպալին, 12 քարշան՝ Անրվիպալին: Մինչդեռ քերականական ձևերի հիման վրա ապացուցվել է, որ ողջ գումարը կազմել է 12 քարշան եւ 6 շեկլան, որն ընծայվել է «Յեվ» -ին:

Վավերագրերի հայրուկ անունների վերլուծությունը ցույց է փալիս, որ դրանք խառնված են օտար ասպվածների անուններին, հեպեաբար հնարավոր չէ պարգել՝ արդյո՞ք հրեաները պաշտել են իրենց կողմից ընդունելի ասպվածներին: Բացի այդ, հայրուկ անունների մեծ մասի հրեական լինելը կասկածելի է: Դժվար է հավաքալ, որ Աշմադարի եւ Աշմաճ անունները կրողները հրեաներ են եղել, կամ Աշմադիվի որդի Աշմաճը եւ Աշմվադի որդի Քոզափին եւ ունեցել են օտար պաշտամունքներ: Կասկածելի են նաև Բիպլնփան, Ալնուռի, Նադադնուի անունները, որոնք եւս նշվում են քաճարի նվիրատուների ցանկում:

Այդուհանդերձ, նշալ անձնանուններից չի կարելի վերջնական եզրակացություն անել Եւի հրեաների կրոնական դավանանքի մասին, մանավանդ եթե հաշվի առնենք խառն ամուսնությունների հավանականությունը»:

Ավելի քան ակնառու է, որ մեջբերված նյութը լի է հակասություններով, որոնք դժվարությամբ են նաև հրեա ուսումնասիրողների համար: Դրանց անդրադառնալուց առաջ ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ ի փարբերություն Ասուանի, Եւն ունեցել է ոչ թե արաբերեն, այլ արամերեն անվանում, ինչը կարող է վկայել այդ բնակավայրի արամեական ծագման մասին: Եւում հրեական համայնքի ձեւավորումը կապվում է Եգիպտոսում Աբեմենյան փիրապետության հասպարման հետ, սակայն պետք է նկատի առնել, որ Ասուանը նույնպես եղել է պարսից իշխանության ու կառավարման ներքո եւ իր ռազմավարական նշանակությամբ գրեթե չի զիջել Եւին: Արամերեն վավերագրերը գրնվել են ինչպես Եւում, այնպես էլ Ասուանում: Այդ դեպքում

ի՛նչն է հիմք տվել ուսումնասիրողներին պնդելու, որ հրեական համայնքը գոյություն է ունեցել Եւում, այլ ոչ՝ Ասուանում: Նարցի պատրասխանն, անշուշտ, կապված է այն հանգամանքի հետ, որ ամենաարժեքավոր արամեերեն պապիրուսները՝ «Խիկարի խրատների պատրաստիկները, Դարեհ I-ի հաղթանակների մասին պաշտոնական գրությունը եւ հրեական փաճարի կործանման մասին վկայող վավերագիրը» Բեռլինի թանգարանի հնագետները հայտնաբերեցին Եւի ավերակ բնակավայրում, որն էլ բանասիրության մեջ հայրնի դարձավ որպես «Էլեֆանտինի հրեական համայնք»:

Փորձենք հասկանալ, թե ինչպե՛ս է ապացուցվել հրեական համայնքի գոյության իրողությունը: Ներագոյությունը նշում են, որ Եւի վավերագրերում հրեական բնակավայրը արամեերեն կոչվում է «խիլա եեռոլիյա», այսինքն՝ «հրեական խիլ», որն իրենից ներկայացրել է կազմակերպված գինվորախումբ: Աճառյանի արմատական բառարանում «խիլ» նշանակում է «փնտրորք, որոնում, խուզարկություն», այն նույնացվում է նաեւ խլել, հափշտակել բառի հետ, որն ունի ասուրերեն խալաթու՝ խլել արմարը⁹: Մա նույնպես հաստատում է, որ Եւում տեղաբաշխվել են գինվորական ջոկատներ, որոնք, ըստ ամենայնի, նախապեսված են եղել խուզարկու գործողությունների համար: Այնուհետք ասվում է, որ Եւի հրեաները վավերագրերում հիշատակվում են նաեւ որպես «արամացիներ», ընդ որում, այդպես է կոչվել բավականին մեծ զորախումբ, որում, բացի հրեաներից, եղել են նաեւ արամեախոսներ: Նրեաների պատմությունից հայրնի է, որ նրանք երբեք «արամացի» (երբայեքն՝ առամի) չեն կոչվել, որովհետեւ իրենք այդպես են անվանել իրենց հեթանոս հարեւաններին: Նույն ի վեր «արամացի, արմինացի» բառերը նրանք նույնացրել են հեթանոսության հետ, որովհետեւ իրենց հեթանոս հարեւանները խոսել են արամեերեն: «Մի հին Թ-արգումում գործածվում է «արամիյուրա» բառը «հեթանոսություն» իմաստով: Պաղեստինում «արամացի», «արամեական» բառերն այնքան տարածված են եղել, որ հրեաները հետագայում հեթանոս բառի համար սկսել են գործածել «այուրիսպի» հունարեն բառը: Երբ արամացիները քրիստոնեություն ընդունեցին, «արամացի» եզրը գործածվեց նաեւ քրիստոնյաների վերաբերմամբ»¹⁰:

Այսպեղ հարկ է հիշել, որ Աբեմենյան փիրապետության շրջանում «արամացի, արմինացի» եզրը գործածվել է հայերի վերաբերմամբ, ինչի մասին փայլուն վկայում է Բեհիսթունի հայրնի արձանագրությունը: «Դարեհ թագավորն ասում է.-«Երբ ես Բաբելոնի մեջ էի գտնվում, իմ դեմ ապստամբեցին հեթանոս երկրները՝ Պարսկաստան, Շոշաստան, Մեդիա, Ասորիք, Եգիպտոս, Արմինա, Պարթևստան, Մարգիանա...»: «Դարեհ թագավորն ասում է.-Արդ Արմինա ուղարկեցի մի արմինացի, իմ Դադարշիշ անունով ծառային եւ այսպես պարվիրեցի.«Գնա եւ նվաճեւ այդ ապստամբ գործը, որ ինձ չէ հպարտակում»: Դադարշիշը գնաց Արմինան նվաճելու: Երբ նա եկավ Արմինա՝ ապստամբները դուրս ելան Դադարշիշի դեմ՝ նրան ճակատամարտի տալու համար»¹¹:

Բացի այդ, վկայություններ կան Եգիպտոսում հաստատված գինվորական հայերի

9 Նր.Աճառյան, Նայերեն արմատական բառարան, հայր. Բ., Երևան 1973, էջ 365:

10 «Еврейская энциклопедия», т. 3, С. Петербург, 1908-1913, с. 49.

11 «Նայ ժողովրդի պատմություն», ԳԱԱ, հայր. Ա. Երևան, 1971, էջ 448:

մասին: Թեպետ առաջին հավասարի փեղեկությունը վերաբերում է Ք.ծ.ա. Ա. դարին, սակայն արդեն իսկ հիշատակվում է հայկական հնագույն հարվածի գոյության մասին. «Նոստրական Սալլուստոս պարմիչը, որը երկար փարիներ Եգիպտոսի կառավարիչն է եղել և լավափեղյակ անձնավորություն է, հայտնում է, որ Եգիպտոսում բավականին թվով հայեր են ապրում և իշխող դիրքեր ունեն: Ամենայն հավանականությամբ, Եգիպտոսում հիշվող հայկական այդ հնագույն հարվածը կազմված է եղել գլխավորապես գինովորականներից. Նոմը (հեղափոխություն ևսև Բյուզանդիան) սովորություն է ունեցել Փոքր Նայքի հայ բնակչությունից գործմասեր կազմել և փեղավորել Եգիպտոսում»¹²: Ասվածն արդեն իսկ հիմք է փալիս ենթադրելու, որ հայերից կազմված գործմասեր Եգիպտոսում եղել են ևսև Աբեմենյան փրապեությունյան շրջանում: Նամոզվելու համար բերենք փաստացի վկայություն. «Աբեմենյան թագավորներից մեկ հասած արձանագրություններում Նայկական լեռնաշխարհը հանդես է գալիս միասնաբար Արմինա և Ուրաշքու, այսինքն՝ Ուրարքու անվան փակ: Այսպեղից հեղեղում է, որ պարսկական փրապեությունյան օրոք Նայկական լեռնաշխարհի երկու վարչական միավորները, այնուամենայնիվ, ընկալվում էին որպես մի երկիր՝ Նայասարան, որը նախկին ուրարքական պեությունյան ժառանգորդն էր դարձել: Ինչպես մարերի և առաջին Աբեմենյանների, այնպես էլ Դարեհի և իր հաջորդների օրոք հայերը մասնակցում էին փրությունյան վարած պարերազմներին»¹³:

Այս առումով ուշագրավ է վավերագրերում նշված այն փեղեկությունը, ըստ որի, Եգիպտոսի կառավարիչը եղել է Արշամը: Նայոց պարմությունից հայտնի է, որ իրանական ծագում ունեցող Արշամ անունը իսկապարածված է եղել հայոց Երվանդյանների փոհում. «Մեծ Նայքի թագավորությունը հնագույն պարական ավանդությունների կրող էր: Դրանք գալիս էին ևս Ք.ծ.ա. Դ. դարի վաղ հայկական թագավորությունից, ևս նրան նախորդած Ուրարքու պեությունից ևս Արմն-Շուբրիայի՝ պեությունյան նախադասը հասած ցեղային միությունից: Իշխող դինասարիան՝ հինավուրց Երվանդյան փոհմը, կառավարման մեծ փորձ էր կուրակել: Այն համարվում էր ևսև ազգակից Աբեմենյան փոհմին, Երվանդներից մեկին՝ պարսից արքային փեսայանալու կապակցությամբ: Երվանդյանների օրոք Նայասարանը ընդհանուր առմամբ պահպանում է Աբեմենյան շրջանում ունեցած սահմանները: Ք.ծ.ա. Գ. դ. առաջին կեսին Երվանդյանների իշխանությունը փարածվում է հայկական Ծովիք երկրամասին հարող անդրեփրապյան Կոմմագենն՝ հին Կոմմուլի երկրի վրա: Կոմմագենն ևս Ծովիքը վերածվում են վարչական մի միավորի, որն այնուհետև առանձնացվում է հայկական թագավորությունից ևս դառնում է ինքնուրույն՝ Երվանդյան Ծամ թագավորի իշխանության ներքո: Սրան հաջորդում է իր որդի Արշամը, որը Ք.ծ.ա. Գ. դ. կառուցում է Արշամաշարը՝ Ծովիքում ևս երկու քաղաք միեկնույն Արշամեա անունով Կոմմագենում»¹⁴:

12 Ա.Աբրահամյան, Նամաշուր ուրվագիծ հայ գաղթավայրերի մասին, Երևան, 1964, էջ 128:

13 Անդ, էջ 452:

14 “Նայ ժողովրդի պարմություն”, ԵՊՏ, Երևան, 1972, էջ 58:

Այժմ անդրադառնանք Եւի պաճարին, որի հրեական լինելը հաստատվում է փաստաթղթերով, իրոք, խիստ հակասական են եւ ոչ համոզիչ: Արդեն սովեց, որ այդ բնակավայրում հրեաների մասին վկայող եբրայերեն որեւէ գրություն չի հայտնաբերվել: Իհարկե, կարելի է ենթադրել, որ դրանք այրվել են Եւի պաճարի ավերման ժամանակ, բայց ամբողջ խնդիրն այն է, որ հնագիտական պեղումների ժամանակ պաճարից մնացած քարե ոչ մի բեկոր չի գտնվել: Միակ վկայությունը, փաստորեն, վավերագրերում գործածված **ագուռա** բառն է: Ուշագրավ է, որ այդ բառը քնդ է գրել Աճառյանի արմատական բառարանում եւ նշանակում է ոչ թե պաճար, այլ «աղիւս»։ «Բնիկ սեմական բառ է, փոխառյալ մի սեմական լեզվից, ասուրերեն՝ aguru բառից՝ նույն խնամքով, փոխառված է պարսկերենից»¹⁵: Եթե նկարի առնենք, որ արամեական այբուբենը ձայնավորներ չի ունեցել, նշյալ բառը կարելի է կարդալ նաեւ **ագարա**, որն, ինչպես գիտենք, նշանակում է արքա, անդաստան, հող, գյուղ: Աճառյանը գտնում է, որ ագարակ բառը փոխառություն է մի որեւէ կորած հնդեւրոպական լեզվից, սակայն՝ «Բ. Խալաթյանը նշում է, որ այն «փոխառյալ է ասուրերեն ikkaru բառից, որ նշանակում է «հողագործ»¹⁶: Կարծում ենք, վավերագրերի բովանդակությանն ավելի մոտ է ագարա, քան ագուռա բառը:

Արդեն նկատեցինք, որ նշյալ բնակավայրը հրեական բանասիրության մեջ բուն բանավեճի առիթ է դարձել այն պարզ պարզառով, որ Նին կրակարանի Երեմիայի գրքում, ի թիվս Եգիպտոսի հրեական մյուս բնակավայրերի, Եւի անունը բնավ չի նշվում: Վիճահարույց է նաեւ հրեադավանության հարցը, քանի որ վավերագրերում Յահվե անվան գրության ձևերը բավականին տարբեր են, իսկ Ասորված՝ Էլոհիմ բառի կրճար «Էլ» ձևն առհասարակ չի հանդիպում, ինչը եւ ուսումնասիրողներին թույլ է տալիս եզրահանգել, որ Եւում գոյություն է ունեցել տարբեր ասորվածների պաշտամունք:

Բանավեճի քննարկ է տալիս նաեւ հրեական Զարկի՝ Պեսախի վերաբերյալ վկայությունը, քանի որ այդ բառը վավերագրերում բնավ չի գործածվում, այլ ենթադրվում է միայն մեկ նախադասության մեջ ընթերցված «14 օր» բառերով, ինչը բավարար չի կարող լինել հայրկապես տունի ծագման պարմական փաստերը հաշվի առնելու պարագայում: Ինչ վերաբերում է անձնանունների վերլուծությանը, ապա մի կողմից բացահայտորեն կասկածելի ու միանգամայն անհավաստի է համարվում, որ այդ անուններով կարող էին կոչվել հրեաները, մյուս կողմից՝ փորձ է արվում դա բացատրել խառն ամուսնությունների հավանականությամբ:

Մեր դիտարկմամբ, հակասական են նաեւ վավերագրերի լեզվի վերաբերյալ արքահայրված քննարկները: Սկզբում ասվում է, որ բոլոր վավերագրերը գրված են հին արամեերենով, որը մոտ է Էգրայի գրքի արամեերենին: Այսպես հարկ է հիշեցնել, որ վերջինս գրվել է ոչ թե հին արամեերենով, այլ՝ եբրայերեն-արամեերեն խառնուրդ լեզվով: Այնուհետեւ նշվում է, որ Եւի արամեերենն առաջին հայացքից բավականին տարբեր

15 Տր.Աճառյան, Տալերեն արմատական բառարան, հայ. Ա., Երևան, 1971, էջ 79,77:

16 Անդ:

է Էզրայի արամերենից եւ ավելի մօր է հնագույն արամերենին: Այդ փարբերությունը պարկերացնելու համար պէտք է անալալմանորեն շեշտել, որ հին արամերենը սուրբգրայինից հին է ավելի քան հինգ դարով, բացի այդ, գործածվել է հիմնականում արամեապատ գրությամբ, որոնցից են նաեւ Նայասպանում հայտնաբերված արքաշխյան արձանագրությունները:

Ջարմանալի է հայկապես այն, որ վավերագրերից երբայերեն փառադարձված մի քանի նախադասությունների թարգմանության մեջ «զի»-ի իմաստն առհասարակ չի նշվում: Մինչդեռ Էզրայի գրքի երբայապատ արամերեն հայվածը մեզ թույլ է փալիս պարզորոշ փեսնել, որ այնպեղ գործածվող «**զի**»-ն լիովին համապատասխանում է հայերեն **զի** շաղկապին, իսկ «**մին զի**»-ն՝ «**վասն զի**»-ին: Նամոզվելու համար բերենք օրինակներ:

Եզրայ Երկրորդ Դ. 15՝ զի փեսցես եւ արասցես արա. Դ. 15 - Դ. 15

Ե. 8՝ զի երթեալ մեր յերկիրն Նրէասփանի արա. Դ. 8 - Դ. 8

Ե. 12՝ վասն զի հարքն մեր բարկացուցին արա. Դ. 12 - Դ. 12

Է. 25՝ զի դափեսցեն զամենայն ժողովուրդս արա. Է. 25 - Է. 25

Անփետված է նաեւ «զնա» բառը, որը նշյալ հայվածում հանդիպում է «դնա» եւ «ալ դնա» ձևերով, որոնք գրաբարյան փեսպերում թարգմանվում են «զայս» եւ «վասն այսորիկ»:

Օրինակ՝ **Եզրայ Երկրորդ Ե. 5՝ Շինել զփունս զայս** - արա. Ե. 5 - Ե. 5

Դ. 15՝ Վասն այսորիկ բաղարս այս իսկ աւերեցաւ - արա. Դ. 15 - Դ. 15

Այս առումով չափազանց կարևոր է ընդգծել, որ Խիկարի արամերենն իր փեսակի մեջ եզակի է եւ նրա մեջ առկա որոշ բառեր, ինչպես օրինակ՝ **զի**, **զնա** գործածական չեն մյուս վավերագրերում: Միանգամայն հասկանալի է, որ այսպեղ գործ ունենք հայերեն **զի** շաղկապի, **զ** նախդրի եւ **նա** ցուցական դերանվան հետ, որը թարգմանվում է «այս» դերանվան հոլովված ձևերով: Սա ակնհայտ վկայում է **զ** նախդրի գործածության մասին, որի ծագման վերաբերյալ ահա թե ինչ է գրել Աճառյանը. «Իր շարք ճոխ գործածությունից դարելով, պէտք է լինի բնիկ հայ: Բայց որովհետեւ **զ** ձայնով սկսող հայերեն բառերը կամ փոխառություն են եւ կամ դեռ մեկնուած չեն, ուստի յայտնի չէ ինչ պիտի լինէր սրա հնիւ. ձևը: Նայերեն նախապատ **զ** ձայնի ծագումը անստույգ է ընդհանրապես»¹⁷: Իսկ Նյուպշմանը քննելով բոլոր գ-ով սկսվող հայերեն բառերը հաստատում է, որ սրանք կամ փոխառություն են, կամ եթե փոխառությամբ մեկնված չեն, մթին են մնում¹⁸:

Ինչպես հայտնի է, Աբեմենյան փիրապետության շրջանում՝ Ք.ձ.ա. 550-334թթ., արամեական գիրը գործածական է եղել նաեւ հայոց վերնախավի կողմից. «Չպէտք է կասկածել, որ Աբեմենյան պետության գրասենյակներում ընդունված արամեական լեզուն, գրության հետ միասին, գործ է ածվել նաեւ Նայասպանում, Ք.ձ.ա. Զ.-Դ. դդ.,

¹⁷ Ն.Աճառյան, Նայերեն արմափական բառարան, Երևան, 1973, էջ 76:

¹⁸ Նյուպշման, Armeniaca, IF, թիվ 19, էջ 457-480:

երբ գրվել է Պարսկաստանի կազմում՝ որպես սապրապություն: Անկախ նրանից, թե արձանագրությունն ինչ լեզվով է գրված եղել՝ հայերեն, թե արամեերեն, ենթադրվում է, որ հնչյունաբանորեն արամեերեն բառը կարդացվում էր հաղորդող ժողովրդի լեզվով: Տվյալ դեպքում, հավանաբար, գործ ունենք գրի պատմության մեջ հայերի «հերերիոգրամայի» կամ «պսեդոգրամայի» հետ, որը մեր թվարկության IV դարի կապակցությամբ առաջ է քաշել Գ. Սարգսյանը: Պարսիկներն արամեացիներից փոխառնելով նրանց գիրը, այն հարմարեցրին ու սկսեցին կարդալ իրենց լեզվով: Այսպես օրինակ, արամեերեն MLK (թագավոր) բառը կարդում էին SHAH, որն ունի դարձյալ թագավոր իմաստը: Սա նշանակում է, որ հնչյունաբանորեն հաղորդված արամեերեն բառը պարսկական փոխարկում կարդացել են պարսկերեն: Մասնագետները հաճախ դժվարացել են պարզել բնագրի լեզուն, որովհետև այն ամբողջապես ծածկագրված է լինում արամեական հերերիոգրամայով: Այդ իսկ պարճառով առանձին բնագրերի վրա նայել են ինչպես արամեական գրության, այնպես էլ՝ հերերիոգրամայի: Երբ բառաշարքը հատուկ չէ արամեականին, այն ճանաչվում է որպես հերերիոգրամա, ինչպես օրինակ՝ Մեռանի արձանագրությունը՝ Նայաստանում: Նայերի կողմից արամեական գրի գործածության մասին ուշագրավ փոփոխություն է հաղորդում Դոդոր Սիցիլիացին՝ Ք.ձ.ա. Ա. դարում: Նա հայտնում է, որ Եվմենեսի Նայաստանի սապրապ Օրոնրիասից՝ Երվանդից ստացած կեղծ նամակը գրված էր սիրիական, այսինքն՝ արամեական փառանիշներով»¹⁹:

Ուղղակի չենք կարող անփնտել աչքի զարնող այն երեւույթը, որ վավերագրերից մեջբերված եբրայաբառ արամեերեն նախադասություններում կան բառեր, որոնք հայերեն իմաստ են արտահայտում, ինչպես օրինակ՝ «վանուրի» - ԴՆՁՐ բառը, որը մասնագետներն արամեերենից եբրայերեն թարգմանել են «անտա», բանի որ սուրբգրային արամեերենում այն նշանակում է դու՝ իզակյան սեռով, իսկ վե՝ եւ շաղկապը մի կողմ են դրել: Մինչդեռ հայերեն այդ բառն ընթերցվում է **եւ անտի**, այսինքն՝ եւ այնպեղից: Այդպես նաև **אֶלֶּם - փլա** բառը կարդացվում է փղա, որի նախնական ձևն, ըստ Նյուպլանի, եղել է **փղե**, նոր ասորերենում այն դարձել է **אֶלֶּם - փալիա**, որը հայերեն, իրոք, թարգմանվում է «փղայ»²⁰: Ի դեպ, այս բառին նախորդում է **נֶם - մին** մասնիկը, որի կապը փղա բառի հետ դարձյալ համապատասխանում է հայերենին՝ **մի փղա**: Անշուշտ, սրանք կարելի է համարել պատահական գուգադիպություններ, սակայն մի հոգվածում այդքան հայերեն բառերի առկայությունը հազիվ թե պատահական երեւույթ լինի:

Ամփոփելով հավելենք նաև, որ բանասիրության մեջ Խիկարի գրույցի ծագման վերաբերյալ վերջին շրջանում ընդունելի է համարվում այն փեսակետը, համաձայն որի գրույցի արամեերեն բնագիրը գալիս է հնագույն ժամանակներից եւ նրա սկզբնաղբյուրը պետք է փնտրել հին արամեացիների գրական մշակույթում, որի կենտրոնը՝ Գոգանը, եղել է Միջագետքում՝ Արամ Նահարայիմում (եբրայերեն նշանակում է Արամը երկու գետերի միջև): Ուսումնասիրողներից Վ. Մեյզլերը Խիկարի խրատների ծագումը կա-

19 Ա.Արքահամյան, Նախամաշտոցյան հայ գիր եւ գրչություն, Երևան, 1982, էջ 75:

20 Ն.Նյուպլան, Ուսումնասիրությունը հայերենի փոխառնալ բառից, Վիեննա, 1894, էջ 42:

պել է «արեւելքի որդիներին» հեպ, որոնք իրենց խմաստությամբ ու խրապագրությամբ աչքի են ընկել դեռևս Սողոմոն թագավորից շատ առաջ: «Այն ժամանակվանից, երբ արամեերենը տարածվեց Ասորեստանի թագավորությունում և արամացի գրողները սկսեցին ծառայել ասորական վարչակարգում, նրանք իրենց խմաստությունը տարան Ասորեստան, իսկ ավելի ուշ շրջանում, պարսկական իրադարձությունները գրի առնելիս, գործածեցին նաև ասույթների ժողովածուները՝ դրանց վրա ավելացնելով իրենց մտքերը: Խիկարը նույնպես գրող է եղել, և նրա խրատների հեղինակը հունական գրականության մեջ կապված են Փոքր Ասիայում արամեերենի տարածման հետ»²¹:

Ներառյալական է այն փաստը, որ Ծննդոց գրքում Նայկական լեռնաշխարհը որոշ սահմանամերձ շրջանների հետ համարվել է «արեւելքի երկիր»։ «Միջագետքից և Պաղեստինից հյուսիս տարածվող Նայկական լեռնաշխարհը համարվել է «արեւելք» ոչ թե բառի աշխարհագրական կողմը ցույց տվող, այլ «արեւի ելքի երկիր» խմաստով: Ներառյալում նախնական խմաստը մոռացվել է և բառն ընկալվել է աշխարհագրական նշանակությամբ»²²:

Եւ այսպես, ի մի բերելով Եւի վավերագրերի պատմության, լեզվի, հրեական համայնքի ու տաճարի վերաբերյալ հրեա ուսումնասիրողների վերոնշյալ հակասական արեւակներն ու ենթադրությունները, կարող ենք փաստել, որ Խիկարի գրույցի արամեական բնագիրը հայտնաբերվել է ոչ թե «Էլեֆանտինի հրեական համայնքում», ինչպես ընդունված է բանասիրության մեջ, այլ Եգիպտոսի հնագույն բնակավայր Եւի ավերակներում, որտեղ Աքեմենյան արքայության օրոք արեւաբաշխվել են գործառններ: Իսկ Խիկարի արամեերենում գ նախդրի գործածությունը և գրույցի նախահայրենիքը Նայկական Միջագետքում արեւադրելը թույլ են տալիս առաջ քաշել այն վարկածը, որ այդ ժամանակ կարող էր գոյություն ունենալ նաև խրատների արամեատառ հայերեն բնագիրը:

21 «Հրեական հանրագիտարան», Երուսաղեմ, 1972, էջ 223:

22 «Նայ ժողովրդի պատմության քրիստոնապիս», հայ. Ա., Երևան, 2007, էջ 41: